

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹԻՎ 8
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«26» ապրիլի 2023թ.

Դատական դեպարտամենտը՝ ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Արթուր Խաչատրյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» N 1334-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով 21.12.2022թ. կնքված ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹԻՎ 8 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.2 կետը, 19.03.2024թ. կնքված թիվ 1 համաձայնագիր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված 1-ում կատարել լրացում՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: **Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելը՝ 13.01.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:**

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 5 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 2 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Դատական դեպարտամենտ

ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն

ՀՎՀՀ 02583241

Ղեկավարի պարտականությունները
կատարող Ն. Գալստյան



(ստորագրություն) Ն.Գ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ

ք. Երևան, Դ. Անհաղթի 19/1, բն.70

Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ

Հ/Հ 163288639103

ՀՎՀՀ 01006813

Հեռ. /+37410/ 50-60-00,

բջջ. /+37491/ 70-75-65,

/+37491/ 70-99-66

Էլ. փոստ artconsulting@mail.ru

Տնօրեն Ա. Խաչատրյան



(ստորագրություն) Ա.Խ.

«26» «09» 2024թ. կնքված
Թիվ 2 համաձայնագրի

«21» դեկտեմբերի 2022թ. կնքված
Թիվ 8 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
I Գնային ցանկ

Հ/Հ	Չափաբաժնի /ծառայության/ անվանում և բնութագիր	Թարգմանիչների Ա.Ա.Հ	ՀՀ դրամ Ծառայության մատուցման միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ
1	Բանավոր թարգմանություն՝ <i>հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն</i>	Սյուզաննա Զրադյան Հակոբյան Լիլյա Արշակյան Հերմինե Մարդոյան Կարինե Հակոբյան Դորա Զաքարյան Հասմիկ Գույումջիբաշյան Նունե Ենգիբարյան Սուրեն Սայադյան Մարիաննա, Մարինե Ռուբենյան, Անուշ Պետրոսյան, <i>Հայկուհի Մակարյան, Պավել Գասպարյան, Աստղիկ Գևորգյան, Լիանա Գրիգորյան, Նարինե Քամալյան Գագիկ Միրզոյան Արմինե Շառլան Մուշեղ Խուդավերդյան</i>	6600
2.	Բանավոր թարգմանություն՝ <i>հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հայերեն</i>	Արփինե Մինասյան, Նազարյան Նաիրա, Մարիամ Ավետիսյան, Աննա Միքայելյան, Շահինյան Մարիամ, Գևորգ Մարգարյան	8400
3	Բանավոր թարգմանություն՝ <i>հայերենից թուրքերեն, թուրքերենից հայերեն</i>	Գարեգինյան Ռուզաննա <i>Մուշեղ Խուդավերդյան Աննա Բաղդասարյան</i>	12000
4	Բանավոր թարգմանություն՝ <i>հայերենից իսպաներեն, իսպաներենից հայերեն</i>	Ավետիսյան Աթեննիկ, Աննա Հովհաննիսյան, Էստելլա Գոյունյան, Օհանյան Տաթևիկ, Արմինե Համբարձումյան Վարդան Գրիգորյան Լուսինե Ղազարյան Զարուհի Օրբելյան	12000

5	Բանավոր թարգմանություն՝ հայերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն	Հասմիկ Ազիզբեկյան, Գայանե Սարգսյան, Մկրտումյան Ինգա, Մարիամ Գրիգորյան Գույումջիբաշյան Նունե Սեդա Ավետիսյան Կարինե Հարությունյան Ենգիբարյան Սուրեն, Ավագյան Գյուլնարա, Լիանա Կարապետյան, Չոբանյան Տաթևիկ, Վարդուհի Շահինյան, Գագիկ Դանիելյան, Պավել Գասպարյան, Երանուհի Բահարյան, Աստղիկ Գևորգյան, Օլգա Ղարիբյան, Վարդանուշ Գյուլբաղյան, Արմինե Շառլան Գագիկ Միրզոյան Գրիգորի Գրիգորյան Նազելի Անտոնյան, Նազելի Գրիգորյան Սամվել Ղահրամանյան Ալբերտ Քալաշյան Լիանա Գրիգորյան Մարինա Գրիգորյան Ալեքսանդր Գրիգորյան Կարինե Ադամյան	4788
6	Բանավոր թարգմանություն՝ հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն	Շագինյան Ռինա, Հարություն Դուրգալյան	6600
7	Բանավոր թարգմանություն՝ հայերենից լեհերեն, լեհերենից հայերեն	Դիաննա Անանյան	14400
8	Բանավոր թարգմանություն՝ հայերենից իտալերեն, իտալերենից հայերեն	Լիանա Կարապետյան	12000
9	Բանավոր թարգմանություն՝ հայերենից պարսկերեն, պարսկերենից հայերեն	Թահմասյան Ռոբերտ, Թախմասյան Հրանուշ Էրիկ Նուրիջանյան Հասմիկ Ավետիսյան, Քարմեն Հովսեփյան Մարիտա Մեհրաբի Ասատուր Մախրաս Մոխթարյան Սուրեն Ստեփանյան Գոռ Արզումանյան Էվելինա Բաբաահարոնյան	6600
10	Բանավոր թարգմանություն՝ հայերենից բուլղարերեն, բուլղարերենից հայերեն	Աննա Հակոբյան	14400
11	Բանավոր թարգմանություն՝ հայերենից ադրբեջաներեն, ադրբեջաներենից հայերեն	Շուշանիկ Սեյրանյան, Մարետտա Վարդանյան	15000
12	Բանավոր թարգմանություն՝ հայերենից չեխերեն, չեխերենից հայերեն	Սիրանուշ Աղաբեկյան,	18000
13	Բանավոր թարգմանություն՝ հայերենից հոլանդերեն, հոլանդերենից հայերեն	Աստղիկ Գևորգյան	18000

14	Բանավոր թարգմանություն՝ հայերենից հնդկերեն, հնդկերենից հայերեն	Հռիփսիմե Ներսիսյան	7200
15	Բանավոր թարգմանություն՝ հայերենից շվեդերեն, շվեդերենից հայերեն	Հռիփսիմե Ապերյան	
16	Գրավոր թարգմանություն՝ հայերենից շվեդերեն, շվեդերենից հայերեն	Բախչինյան Աշխեն	20400
17	Բանավոր թարգմանություն՝ հայերենից քրդերեն, քրդերենից հայերեն	Բախչինյան Աշխեն	18000
18	սուրդո թարգմանություն՝ խուլ ու համրերի համար	Հասան Թամոյան	8400
19	Բանավոր թարգմանություն՝ հայերենից սույն կարգով չսահմանված լեզուներ, սույն կարգով չսահմանված լեզուներից հայերեն	Բալեյան Ռոզա Սիրանուշ Մալխասյան Քրիստինե Բրթոսյան	6000
20	Գրավոր թարգմանություն՝ հայերենից սույն կարգով չսահմանված լեզուներ, սույն կարգով չսահմանված լեզուներից հայերեն		18000
			14400
II Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը			
Ծառայության մատուցումն իրականացվում է Կողմերի միջև կնքվող սույն պայմանագրի հիման վրա գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:			

Միջին բարդության իրավաբանական թարգմանությունը՝ Պատվիրատուի կամ դատարանի կողմից հանձնարարված պատշաճ որակի թարգմանությունն է:

Լրացուցիչ պահանջներ՝

1. Թարգմանիչների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» N 1509-Ն որոշմանը համապատասխան որակավորված համարվող անձ հանդիսանալը հավաստող համապատասխան փաստաթղթերը կցվում են յուրաքանչյուր թարգմանչական գործին:

1.1 Սույն հավելվածով սահմանված՝ 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով ծառայությունների մատուցման դեպքում այդ ծառայությունը մատուցող թարգմանիչը դատարանին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» N 1509-Ն որոշմանը համապատասխան որակավորված համարվող անձ հանդիսանալը հավաստող համապատասխան փաստաթղթերը:

2. Գրավոր թարգմանության դեպքում Պատվիրատուն՝ թարգմանվող տեքստը Կատարողին հանձնում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը՝ տեքստը ստանալու օրվանից դատավորի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը և Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված թարգմանված տեքստը՝ թղթային և դրա էլեկտրոնային տարբերակներով:

3. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն առնվազն երկու օրինակից, իսկ Պատվիրատուի պահանջի դեպքում՝ նաև երեք օրինակից:

4. Թարգմանվող նյութերում կնիքի և ստորագրության առկայության դեպքում թարգմանությունը իրականացվում է հետևյալ կերպ՝

- ✓ Կնիքի առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով <Կնիք գինանշան> /կնիքի վրա առկա գրառումները չեն թարգմանվում/, /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի կնքված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում նույն կնիքը համապատասխան ձևով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի կնիքների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/
- ✓ Ստորագրության առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով <Ստորագրություն> /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի ստորագրված էջերի քանակը

- գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում ստորագրությունը համապատասխան լեզվով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի ստորագրությունների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/
- ✓ Թարգմանության ներկայացված նյութերում առկա՝ մաթեմատիկական բանաձևերը, վիճակագրական դիագրամները, ֆինանսական կամ այլ հաշվարկների վերաբերյալ աղյուսակները, ինչպես նաև այն նշումները, որոնք թարգմանության արդյունքում փոփոխության չեն ենթարկվում, այսինքն՝ չեն թարգմանվում, ուստի չեն կարող հաշվարկվել որպես թարգմանված նյութի միավորներ:
 - ✓ Եթե թարգմանության ներկայացված նյութերում առկա թվանշանների քանակը գերազանցում է 5 էջը, ապա դրանք թարգմանված փաստաթղթում արտացոլվելու համար վճարվում է 5 էջին համարժեք չափով:

Ծանոթություն՝

1. Մինչև 1800 նիշից բաղկացած թարգմանված նյութի համար թարգմանված նյութի գնի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝ մեկ էջի (1800 նիշ բացառով) համար սահմանված գին /1800 x թարգմանված նյութի նիշերի քանակ:
 2. Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 25 մմ, աջից 15 մմ և ձախից 30 մմ, Միջտողային միջակայքը՝ 1.5:
 3. Բանավոր և խոլ համրերի համար սուրդո թարգմանությունը կատարվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Կատարողը՝ Պատվիրատուի պահանջը ստանալու օրվանից դատավորի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը: Նշված թարգմանությունների մեկ միավորի գինը հաշվարկվում է ժամով, որը ներառում է բացառապես դատական նիստի փաստացի տևողությունը:
 4. Եթե թարգմանության կամ այլ ծառայության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի: Եթե թարգմանության մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է կես թարգմանչական էջը, բայց պակասում է մեկ թարգմանչական էջից, ապա այն հավասարեցվում է մեկ թարգմանչական էջի, իսկ եթե թարգմանության մի հատվածը պակաս է կես թարգմանչական էջից, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես թարգմանչական էջի:
- Թարգմանչական էջ է համարվում 1800 նիշ բացառով էջը, բացառությամբ չինարեն, կորեերեն, ճապոներեն լեզուների:
5. Գնման առարկա հանդիսացող թարգմանության ծառայությունները Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների կարիքների համար ձեռքբերվող թարգմանության ծառայություններ են, որոնք մատուցվում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Դատական դեպարտամենտ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՎՀՀ 02583241

Ղեկավարի պարտականությունները
կատարող Ն. Գալստյան




(ստորագրություն) Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
ք. Երևան, Դ. Անհաղթի 19/1, բն.70
Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ
Հ/Հ 163288639103
ՀՎՀՀ 01006813

Հեռ. /+37410/ 50-60-00, քջ. /+37491/ 05-05-10

Էլ. փոստ articonsulting@mail.ru



(ստորագրություն)